А. С. СИЛИН, *Экспансия германского империализма на Ближнем Востоке накануне первой мировой войны (1908—1914)*, М., 1976, 358 стр.

Գրախոսվող աշխատության հեղինակը խնդիր է դրել ճշտելու Գերմանիայի՝ Մերձավոր Արևելք ներթափանցելու հիմնական ուղիները, լուսաբանելու նրա նվաճողական քաղաքականությունը Մերձավոր Արևելքում, բուն Գերմանիայում տարբեր դասակարգերի և քաղաքական կուսակցությունների դիրքորոշումը Թուրքիայի նկատմամբ և, ի վերջո, թուրքական կառավարող շրջանների վերաբերմունքը 1908—1914 թթ. միջազգային իրադարձությունների նկատմամբ։

Ա. Սիլինը, չժխտելով գերմանական կապիտալի կողմից ձեռք բերված Բաղդադի երկաթգծի կառուցման կոնցեսիայի հսկայական նշանակությունը և դրա հետևանքով իմպերիալիստական տերությունների միջև պայքարի սրումը, վճռական տեղ է հատկացնում նաև Մերձավոր Արևելք Գերմանիայի ներթափանցելու ուղու վրա։

Աշխատության կարևոր արժանիքներից է այն, որ հեղինակը մերժում է պատմագիտության մեջ երկար ժամանակ իշխող հակապատմական այն տեսակետը, ըստ որի Օսմանյան կայսրությունը սովորաբար դիտվում էր միայն իբրև մեծ տերությունների քաղաքականության պասսիվ օբյեկտ։ Նա գտնում է, որ Թուրքիայի կիսագաղութային դրությունը բոլորովին էլ չէր խանգարում նրան վարելու ակտիվ արտաքին քաղաքականություն (էջ 6)։

Ֆրանսիայի դեմ հաղթական պատերազմի հետևանքով նորաստեղծ գերմանական կայսրությունը բացահայտ կերպով հանդես էր գալիս աշխարհի նոր վերաբաժանման պահանջով, և արևելյան հարցը կրկին դառնում է իմպերիալիստական տերությունների հակասությունների կարևորագույն հանգույցներից մեկը։

Օսմանյան կայսրության հետամնացությունը և մեծ տերությունների մրցակցությունը պարարտ հող հանդիսացան արագ տեմպերով զարգացող գերմանական իմպերիալիզմի Թուրքիա ներթափանցելու համար։ Հեղինակն իրավացիորեն նկատում է, որ Գերմանիայի ռազմա-քաղաքական թափանցումը Մերձավոր Արևելք ոչ միայն նախորդեց ֆինանսա-տնտեսական թափանցմանը, այլև նախադրյալներ ստեղծեց վերջինիս համար։ Այդ է գերմանական էքսպանսիայի առանձնահատկությունը Թուրքիայում՝ XIX—XX դդ. սահմանագլխին (էջ 10)։ Ա. Սիլինը հանդում է միանգամայն ճիշտ եզրակացության, որ Մերձավոր Արևելքում Գերմանիայի ռազմա-քաղաքական և տնտեսական էքսպանսիային մասնակցել են գերմանական խոշոր բուրժուազիայի մոնոպոլիստական շրջանները և յունկերությունը։ Էքսպանսիայի ակտիվ մասնակիցներից էին նաև կայզերն ու նրան մոտիկ կանգնած մարդիկ, որոնք սերտորեն կապված էին ֆինանսական կապիտալի վերնախավի հետ։

Անդրադառնալով XIX դ. 90-ական թվականների թուրք-գերմանական հարաբերությունների հարցին, հեղինակը հատուկ անդրադառնում է նաև Թուրքիայում հայերի մասսայական ջարդերի նկատմամբ Գերմանիայի բռնած դիրքին։ Նա ցույց է տալիս, որ այդ ջարդերը հավանության արժանացան կայզերի կողմից, որը «նվագակցում» էր սուլթանի պանիսլամիստական քաղաքականությանը, փափագելով իր իշխանությանը ենթարկել Օսմանյան կայսրության բոլոր մահմեդականներին։ Այդ ճանապարհով կայզերը ձգտում էր ձեռք բերել ոչ միայն Թուրքիայի բնակչության ճնշող մեծամասնության, այլև ամբողջ մահմեդական աշխարհի համակրանքը, որի վրա ցանկանում էր հենվել Անգլիայի հետ հնարավոր բախման ընթացքում (էջ 11)։

Հեղինակը ուշագրավ փաստերով ցույց է տալիս, որ Օսմանյան կայսրությունը խճճված էր կապիտուլյացիաների մեջ։ Թուրքական ռազմական ֆեոդալիզմը նոր պայմաններին հարմարվելու անընդունակությամբ արժեքազրկվում էր միջազգային և սեփական ժողովրդի հասարակական կարծիքի առջև։ «Ճամբար պետությունն» այլևս անհանդուրժելի էր նոր օրերին, իսկ

Թուրքական կառավարողներն իրենց գոյությունը միայն այդպիսի պետության մեջ էին տեսնում։ Օրվա պահանջների հետ քայլել չկարողանալուց էլ հենց բխում էին կայսրության նորանոր տրոհումները, ֆինանսական քայքայումը, օտարերկրյա կապիտալի գերիշխանությունը տնտեսական կյանքում և այդպիսով իմպերիալիստական պետությունների ազդեցության հաստատումը Թուրքիայում։

Ա. Սիլինի բերած արխիվային փաստաթղթերը վկայում են, թե ժամանակակիցներն ինչպես են գնահատել ֆոն դեր Գոլցի և նրա միսիայի գործունեությունը։ Մասնավորապես երևվում է, որ գերմանական սպաները, որոնք զբաղված էին Թուրքիայի ռազմական հզորության ստեղծումով, հանդիսանում էին ոչ միայն սլավոնականության, այլև բոլոր արևելյան քրիստոնյաների թշնամիները (էջ 60)։ Այս կապակցությամբ բերվում է Էրզրումից Թուրքական պառլամենտի պատգամավոր Վարգեսի հրապարակային ելույթը, որով դատապարտվում է կառավարության գերմանական կողմնորոշումը (էջ 60)։ Հեղինակը նաև մեջ է բերում Վանի քաղաքի ռուսական փոխ-հյուպատոս Վիշինսկու մեկնաբանությունը վերոհիշյալ ելույթի մասին. «Այդ խոսքերը,— գրում է Վիշինսկին,— հանդիսանում են հայերի մեծամասնության տրամադրության արձագանքը...։ Այստեղի հայերի կողմից շատ է խոսվում Գոլց-փաշայի և նրա գործակիցների արտակարգ ազդեցության մասին Թուրքիայի ղեկավար զինվորականների վրա. դա հասկանալի է, թուրքական բանակի և նավատորմի աճը հանդիսանում է իր տեսակի մեջ մղձավանջ Թուրքիայի քրիստոնյաների համար» (էջ 324)։

Ամփոփելով Բաղդադի երկաթգծի կառուցման արդյունքները և հետևանքները, հեղինակը հանգում է միանգամայն ճիշտ եզրակացության, որ անգլո-գերմանական հարաբերությունները XX դ. սկզբում զգալի չափով որոշում էին մարդկության ճակատագիրը։ Ահա թե ինչու երկաթուղային ճանապարհների կառուցման պրոբլեմը հանդիսանում էր անգլո-գերմանական հակամարտության ցայտուն դրսևորումներից մեկը և իրավամբ գերմանական էքսպանսիոնիստների այդ ձեռնարկումը հանդիսացավ առաջին համաշխարհային պատերազմի բռնկման գլխավոր գործոններից մեկը (էջ 206)։

Գրախոսվող աշխատության մեջ հանգամանորեն բացահայտվում է Լիման ֆոն Սանդերսի ռազմական միսիայի գործունեությունը Թուրքիայում և նրա քաղաքական հետևանքները։ Հեղինակն իրավացիորեն ցույց է տալիս, որ թեև իտալո-թուրքական և բալկանյան պատերազմները սասանեցին Թուրքիայի վստահությունը իմպերիալիստական Գերմանիայի նկատմամբ, սակայն պարտված Օսմանյան կայսրությունը կրկին շարունակեց իր ռազմականացման կուրսը՝ այդ նպատակին հասնելու համար դարձյալ ապավինելով Գերմանիային։ Ինչպես ցույց է տալիս Ա. Սիլինը, Գերմանիայում խորապես համոզված էին, որ գերմանական ռազմական միսիան հեշտությամբ ի վիճակի չէ անցկացնելու համապատասխան վերակառուցում թուրքական բանակում։ Անցյալի փորձը համոզել էր, որ ոչ մի եվրոպական նորամուծություն չի կարող նկատելի չափով բարելավել թուրքական զինված ուժերը։ Դրա ամենամեծ խոչընդոտն էր թուրքական կայսրության կիսաֆեոդալական տնտեսական բազան, դրա հետ միաժամանակ կայսրությունը ծվատող սուր ազգային հակասությունները։

Հանգամանորեն վերլուծելով Թուրքիայում 1913 թ. դեկտեմբերից մինչև 1914 թ. հուլիսն ընկած շրջանի քաղաքական իրադարձությունները, պատերազմի նախօրյակին թուրք-գերմանական հարաբերությունների զարգացման ընթացքը, Ա. Սիլինը հատուկ կանգ է առնում նաև հայկական հարցի վրա։ Մասնավորապես նա ցույց է տալիս, որ գերմանական կառավարությունը խիստ մտահոգված էր այդ հարցով, նպատակ ունենալով հնարավորին չափ սահմանափակել Արևմտյան Հայաստանի համար նախատեսվող ռեֆորմների ծրագիրը, որը ներկայացված էր Ռուսաստանի կողմից։ Մյուս կողմից, Ստամբուլում Ռուսաստանի գործերի հավատարմատար Գուլկևիչի վկայությամբ, գերմանացիները ցանկանում էին «ձեռք բերել հայերի համակրանքը, որոնց Գերմանիան թանկ է գնահատում, նկատի ունենալով նրանց գերակշռությունը Կիլիկիայում, որը Գերմանիան համարում էր իր ազդեցության ոլորտը» (էջ 251)։

Բացահայտելով առաջին համաշխարհային պատերազմի մեջ Օսմանյան կայսրության մտնելու ներքին դրդապատճառները, հեղինակը նախ ցույց է տալիս, որ Թուրքիան բոլոր տվյալներն ուներ պահպանելու չեզոքություն։ Թուրքիայի պատերազմի մեջ մտնելը հետապնդում էր նրա ագրեսիվ պլանների իրագործման նպատակ։ Թուրքիան համաշխարհային պատերազմի մեջ ներգրավվելով ցանկանում էր հետ վերադարձնել բալկանյան պատերազմների հետևանքով կորցրածը։ Բացի այդ, թուրքական կառավարող շրջանները ամեն կերպ ձգտում էին ոչ միայն 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով կորցրած Կարսի, Արդահանի և Բաթումի վերադարձը, այլև Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող բազ-

մաթիվ այլ շրջանների դավթումը, այսինքն՝ պանթուրքական, պանիսլամական երիտթուրքական պլանների իրագործումը (էջ 335)։ Գրախոսվող աշխատության մեջ վերին աստիճանի ուշագրավ ու հետաքրքիր տվյալներ են բերվում Գերմանիայի կողմից այդ պլանների խրախուսման վերաբերյալ։ Մասնավորապես ցույց է տրվում, որ գերմանական կառավարության 1914 թ. օգոստոսի 6-ի նոտայում Գերմանիան պարտավորվում էր «ուղղել Օտտոմանյան կայսրության արևելյան սահմաններն այնպես, որպեսզի ապահովեր Թուրքիայի անմիջական շփումը Ռուսաստանի մահմեդական բնակչության հետ» (էջ 276)։

Միանգամայն ճիշտ է նաև Ա. Սիլինի այն եզրակացությունը, որ «օգտագործելով Թուրքիայի ստրատեգիական դիրքը, մարդկային և հումքային ռեսուրսները, գերմանացիները կարողացան հետադգել իրենց սեփական կրախը, համենայն դեպս երկու տարով» (էջ 321)։

Մենք չենք բաժանում հեղինակի այն կարծիքը, որ Անտանտայի համար ստեղծվել էին բարենպաստ պայմաններ Թուրքիային իր կողմը գրավելու համար։ Հեղինակը ճիշտ չէ, գրելով, որ «իմպերիալիզմի դարաշրջանում Թուրքիայի քայքայումը շարունակում էր ուժեղանալ, որը բացատրվում էր նրանում բնակվող ոչ թուրք ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման բուռն աճով» (էջ 4)։ Ոչ թե ազգային-ազատագրական շարժումն է պատճառ Թուրքիայի քայքայման, այլ թուրքական բռնակալությունն է պատճառ ազգային-ազատագրական շարժման։

Եզրափակելով նշենք, որ մեթոդոլոգիական ճիշտ ելակետը, պատմականության սկզբունքի կիրառումը և փաստական նյութի բազմակողմանի օգտագործումը հեղինակին հնարավորություն են տվել ստեղծելու արժեքավոր մենագրություն։

ԿԱՐԱՊԵՏ ՔԱՐԱՄՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր